

Սակայն վերելում մեր կատարած՝ Սահակ Մուսուկի կաթողիկոսութեան խնդրի պարզաբանումը եւ մնացեալ աղբիւրների տեղեկութիւնների խնամքով համադրումը թոյլ է տալիս այլ լուծում տալ նաեւ այս յունարէն գրուածքների հայերէն բնօրինակների հեղինակի անուան հաւաստութեան հարցին: Նման մօտեցմամբ մենք տեսնում ենք, որ ըստ էութեան ոչինչ չի խանգարում ենթադրել, որ սահմանային Տայքի եպիսկոպոս Սահակ Մուսուկ վարդապետն, առաւել մեծ հաւանականութեամբ, նախ իր հայրենի նահանգի՝ արդէն մեծաթիւ դարձող եւ հարեւան Բիւզանդական կայսրութեան անթաքոյց հովանաւորութիւնը վայելող քաղկեդոնականների կողմից հալածուելով տեղափոխուել է կենտրոնական Հայաստան եւ Դուրիի Հայոց կաթողիկոսարանում նշանակալի դեր կատարել յոյների դաւանական ճնշումներին մասնագիտօրէն ու հիմնաւոր պատասխանելու գործում, ապա իր հովանաւոր Զաքարիա Ձագեցի հայրապետի մահուանից յետոյ կաթողիկոս ընտրուելուց (°) կամ իբրեւ տեղապահ պաշտօնավարելուց ինչ-որ ժամանակ անց, ըստ երեւոյթին, ինչ-

ինչ զիջումներ անելու միտումներ է դրսեւորել, որի համար հալածուել է արդէն Հայ հոգեւորականութեան կողմից եւ անձնական վիրաւորանքի զգացումով տեղափոխուել Կոստանդնուպոլիս, որտեղ մի քանի հակաճառութիւն է հեղինակել արդէն իր հայրենի հաւատքի դէմ: Կեանքի մայրամուտին Հայոց այս «չկայացած» կաթողիկոսը (որի անունը չի պահպանուել մեզ հասած կաթողիկոսական գաւազանագրքերից որեւէ մէկում), թերեւս, վերադարձել է հայրենի Տայք՝ իր վերջին երկերի յունարէն թարգմանչի կամ մի ընդօրինակող գրչի կողմից կոչուած՝ «պարսիկների երկիր»: Ենթադրելի է, որ «Կանոնագիրք Հայոցի» «մեծ» խմբագրութեան ուղ ընդօրինակութիւններում նրա կանոնների՝ «Վերջնոյ Սահակայ» հարազատ վերտառութեան փոխարէն, իբրեւ մի իւրօրինակ պատիժ՝ «Մովսէս Քերթողազօր» (°) տարբերակի ի յայտ գալու պատճառն էլ է այս համատեքստում պարզ դառնում. այդպէս եւ՝ թ դարում հայ-բիւզանդա-վրացական կոնտակտային գօտու յորձանուտում յայտնուած Տայք աշխարհի ծնունդ հայ ուսեալ մարդու մի ծանր ճակատագիր:

ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ «ՏԱՐԵԳՐՔԻ»  
ՍԿԶԲԵՆԱՂԲԻԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տարեկի Աթայեան

Մմբատ Սպարապետի «Տարեգրքի» սկզբնաղբիւրների հարցի հետազօտութիւնն անհրաժեշտ ու կարեւոր է երկու առումով: Առաջին մօտեցումը հայագիտութեան մէջ կարելի է համարել աւանդական, երբ գլխաւոր ուշադրութիւնը սեւեռում է որեւէ հեղինակի ձեռքի տակ եղած երկերի բացայայտմանը: Այս տեսանկիւնից Մմբատ Սպարապետի «Տարեգրքը», անշուշտ, չի անտեսուել: Հետազօտողները նշել են երկի ենթադրեալ սկզբնաղբիւրներից մի քանիսը, բնութագրել են Մմբատ Սպարապետին քաջածանօթ աշխատութիւնների շրջանակը: Փոխարէնը՝ հարցադրումներ չեն կատարուել երկրորդ առումով. մասնաւորապէս՝ չեն արծարծուել հետեւեալ խնդիրները՝ ի՞նչ չափով ու ինչպէ՞ս է օգտուել Մմբատ Սպարապետն իր սկզբնաղբիւրներից: Մինչդեռ միջնադարեան պատմիչի աշխատութեան ինքնատիպութեան աստիճանի բացորոշումը, նրա հեղինակային ինքնագիտակցութեան բնութագրական դժերի պարզաբանումը, իր ձեռքի տակ եղած սկզբնաղբիւրների բնագրերը համառօտելու, ընդարձակելու, լրացնելու սկզբունքների լուսաբանումը

առաւել քան անհրաժեշտ են՝ պատմական երկերի լիարժէք հետազօտութիւնն ապահովելու համար:

«Տարեգրքի» քաղաքական հատուածի ուսումնասիրումը ցոյց է տալիս, որ հեղինակը միշտ չէ, որ բառացի է մէջբերել իր նախորդների հաղորդածը, հետեւաբար՝ հաստատել «Տարեգրքի» կապը այս կամ այն սկզբնաղբիւրի հետ, ելնելով շարադրանքի նմանութիւնից, միշտ չէ, որ հնարաւոր է: Միւս կողմից՝ հեղինակը յաճախ է մէկտեղել տարբեր երկերից քաղուած տեղեկութիւնները, ինչն իր հերթին դժուար է դարձնում սկզբնաղբիւրների բացայայտումը: Հետեւաբար՝ «Տարեգրքի» սկզբնաղբիւրների հետազօտութիւնը բարդ եւ համալիր խնդիր է:

«Տարեգրքի» անմիջական կապը Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» հետ երբեւէ կասկած չի յարուցել: Այս երկու ստեղծագործութիւնների միջեւ առկայ բովանդակային եւ շարահիւսական բազմաթիւ համընկնումներն ու զուգահեռները հաստատում են այդ իրողութիւնը: Առաջին հերթին անդրադառնանք այն դէպքերին, երբ «Տարեգրքում» գրեթէ բառացի ընդօրինակուած են «Ժամանակագրութեան» վկայութիւնները:

Համադրենք մէկ օրինակ.

Մատթէոս Ուռհայեցի

Ի սոյն ամի իշխան ոմն յաղթանդամ ի տանէն Յունաց Նիկիփօս անուն ծովիզ յարեալ ի վերայ Վասլին և կոչեաց ի միաբանութիւն իւր գրագատուն Վրաց Գորգի և գորդիսն Գագկայ. գնաց յահէ նորա Դալիթ առ նա գօրօն Հայոց,

1 Մմբատայ Սպարապետի Տարեգրքը, Վեներտիկ, 1956, էջ 2-է. 1. 2. Բարայեան, Մմբատ Սպարապետը եւ «Տարեգրքի» հեղինակի հարցը, ՊԲՀ, 1976, թիւ 1, էջ 243-254. *La chronique attribuée au Connétable Smbat*. Introduction, traduction et notes par Gérard Dédeyan, Paris, 1980, p. 9-37; S. Der-Nersessian, *The Armenian Chronicle of the Constable Smbat or of the "Royal Historian"*, Dumbarton Oaks Papers, XII, 1959, pp. 141-168; Смба́т Спарапет, *Летопись*, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Галстяна, Ереван, 1974, стр. XXXVII.

և ահ մեծ եղև ի վերայ Վասիլին: Եւ յղեաց Վասիլին առ Դաւիթ աղաչանս, զի հնարեսցէ զկորուստ նորա: Եւ ծովիզն յոյժ սիրել գԴաւիթ եւ խոստանայր նստուցանել զնա յարոտ թագաւորութեան Հայոց, բայց Դաւիթ ոչ կամեցաւ լուծանել զղաշինս Վասիլին: Եւ յատու միում գնայր Դաւիթ ի տուն իւր խոտովութեան աղագաւ եւ յարուցեալ Նիկիփսոն միայն և գրկեաց զնա և աղաչել զառնալ. իսկ Դաւիթ ակնարկեալ արանցն, և նոյնժամայն սպանին զծովիզն, և զօրքն նորա ցրուեալ եղեն փախստական, և լուեալ զայն Վասիլին՝ ուրախ եղև յոյժ և տայր պարգևս Դաւիթի զԿեսարիա և զԾամնդաւ և Խաւատանէքն հանդերձ սահմանօքն: Եւ Վասիլին մեծաւ զայրացմամբ գայր ի վերայ Գորգէի Վրաց թագաւորին բազում զօրօք. և արարին Ձիօնից բերդին առաջի մեծ պատերազմ. և Գորգի փախստական լեալ անկանել յամուր բերդս եւ գրեւ զանձն իւր ծառայ Վասիլին եւ տայր պատանդ զորդին իւր<sup>2</sup>:

**Սմբատ Սպարապետ**

Ի սոյն ամի իշխան ոմն յաղթանդամ, ի տանէն Յունաց, Նիկիփօր անուն Յովիզ, յարեալ ի վերայ Վասիլին, և կոչեաց ի միաբանութիւն իւր զթագաւորն Վրաց Գորգի, և զորդիսն Գագկայ: Գնաց յահէ նորա եւ Դաւիթ առ նա զօրօք Հայոց: Եւ եղև ահ մեծ ի վերայ Վասիլին. եւ յղեաց Վասիլին առ Դաւիթ աղաչանս զի հնարեսցէ զկորուստ նորա. և Յովիզն յոյժ սիրել գԴաւիթ, եւ խոստացաւ նստուցանել զնա յարոտ թագաւորութեան Հայոց: Բայց Դաւիթ ոչ կամեցաւ լուծանել զղաշինս Վասիլին: Եւ յատու միում, գնայր Դաւիթ ի տուն իւր խոտովութեան աղագաւ, և յարուցեալ Նիկիփօր միայն և գրկեաց զնա, աղաչել զառնալ. իսկ Դաւիթ ակնարկեալ արանց և նոյն ժամայն սպանին զՅովիզն, և զօրք նորա ցրուեալ եղեն փախստական: Եւ լուեալ զայն Վասիլին, ուրախ եղև յոյժ, և տայր պարգևս Դաւիթի զԿեսարիա և զԾամնդաւ, և զամենայն Խաւատանէքն հանդերձ սահմանօքն: Եւ Վասիլին մե-

ծաւ զայրացմամբ գայր ի վերայ Գորգէ Վրաց թագաւորին, բազում զօրօք. եւ արարին Ձիօնից բերդին առաջի մեծ պատերազմ, և Գորգի փախստական լեալ անկանել յամուր բերդես, և գրեւ զանձն իւր ծառայ Վասիլին, և տայր զորդին իւր պանտանտ առ նմա<sup>3</sup>:

*Համադրուածը ցոյց է տալիս, որ Հեղինակը փոխանցում է սկզբնաղբիւրի վկայութիւններն առանց փոփոխութեան. միանման են ե՛լ դրուագները բառապաշարը, ե՛լ ծաւալը: «Ժամանակագրութեան» անմիջական ազդեցութիւնը նկատելի է նաեւ «Տարեգրքի» այլ հատուածներում: Օրինակ՝ Վասիլ Բ կայսեր օրօք (975-1025) Անին եւ Կարսը կայսրութեանը յանձնելու, վրաց թագաւոր Գէորգի Ա-ի (1014-1027) ներկայացրած պահանջները, Տրապիզոնում Պետրոս Գետազարձ կաթողիկոսի եւ կայսեր հանդիպման մասին պատմող հատուածները «Ժամանակագրութիւնում» եւ «Տարեգրքում» նոյն կերպ են ներկայացուած.*

**Մատթէոս Ուոհայեցի**

«Ի թուականութեանս Հայոց Նշ եղանել Վասիլին յարեալս անթիւ զօրօք և խնդրեաց ի թագաւորէն Հայոց զԱնի և զԿարս: Եւ Յովհաննէս որդի Գագկայ խորհեցաւ տալ վասն թուրքեան սրտի իւրոյ: Իսկ Վասիլին դարձաւ յաշխարհն իւր եւ գրեաց առ Գորգի թագաւորն Վրաց զայ նմա ի հնազանդութիւն. զոր ոչ ընկալաւ եւ ոչ յանձն էառ: Յայնժամ զայ Վասիլին պատերազմաւ ի վերայ նորա. և զօրքն Վրաց գնացին ընդդէմ նորա և Ռատն և Զոյատն՝ արքա քաջ եղբարք Լիպարտին ուժգին բախեցին զգօրսն Վասիլին՝ մինչեւ սպանաւ Ռատն, զի ձին նորա խրեցաւ ի տեղի մի տիղմ և անդ սպանաւ. և ապա դարձան ի փախուստ զօրքն Վրացեաց. և զօրք Վասիլին զկնի երթեալ կոտորէին: Եւ կացեալ Վասիլին անդ ամիսս Գ. մինչեւ հաւանեցոյց զնոսա և ի Տրապիզոն ձմերեաց:

2 Մատթէոս Ուոհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 51:

3 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 26:

Եւ գնայր առ թագաւորն Վասիլ Տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց եւ սուրբ վարդապետն Յովհաննէս Կոզեռն բազում սպասում. Եւ թագաւորն ընկալաւ զնոսա մեծաւ պատուով. և ի հասանելն մեծի ատուր մկրտութեան Տեառն մերոյ մեծարեաց թագաւորն զՏէր Պետրոսն եւ զվարդապետն Հայոց և ի վեր ետ կացուցանել քան զառաջնորդսն Յունաց եւ յառաջ Տէր Պետրոսի հրամայեաց օրհնել զջուրն. զոր իբրեւ արկանել զմիտոն սուրբ ձիթոյն ի ջուրն և հարկանել սուրբ Նշանան զջուրն, հուր սաստկապէս ցոլացեալ երեւել ի վերայ ջրոյն և կապեցաւ գետն առ վայր մի և ոչ շարժել. եւ տեսալ թագաւորին և զօրացն զարհուրեցան և խոնարհեալ թագաւորն՝ արկանել զօրհնեալ ջուրն ի վերայ գլխոյն աջովն Տէր Պետրոսի: Եւ դարձաւ Տէր Պետրոսն մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց: Իսկ Վասիլին յետ ժամանակաց զայ յԱնտիոք ի ծածուկ Գ արամբ հաւատարմօք և եկեալ ի Սեաւ լեառն ի տեղին, որ կոչի Պաղակնիակ, և ի հօրէ և յառաջնորդէ տեղոյն առնու զԲրիստոսական կնիքն և յայնմ հետէ եղև որպէս զհայր աշխարհիս Հայոց ...<sup>4</sup>»:

**Սմբատ Սպարապետ**

«Ի թուին Հայոց Նշ եղանել Վասիլին յարեալս անթիւ զօրօք, և խնդրեաց զԱնի և զԿարս. և Յովհաննէս, որդի Գագկայ, խորհեցաւ տալ վասն թուրքեան սրտի իւրոյ: Իսկ Վասիլին դարձաւ յաշխարհն իւր և գրեաց առ Գորգի թագաւորն Վրաց, զայ նմա ի հնազանդութիւն. զոր ոչ ընկալաւ և ոչ յանձն առ: Յայնժամ զայ Վասիլ թագաւորն պատերազմաւ ի վերայ նորա. և զօրքն Վրաց գնացին ընդդէմ նորա, և Ռատն և Զոյատն արքա քաջ, եղբարք Լիպարտին, ոյժգին բախեցին զգօրսն Վասիլին մինչև սպանաւ Ռատն, զի ձին նորա խրեցաւ ի տեղի մի տիղմն և անտ սպանաւ: Եւ ապա դարձան ի փախուստ զօրք Վրացեացն, և զօրք Վասիլին զկնի երթեալ կոտորէին: Եւ կացեալ Վասիլին անդ ամիսս Գ մինչև հաւանեցոյց զնոսա, և ի Տրապիզոն ձմերեաց:

Եւ գնայր առ թագաւորն Վասիլ տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց, և Յովհաննէս Կոզեռնն, բազում սպասում: Եւ թագաւորն ընկալաւ զնոսա պատուով: Եւ ի հասանել մեծի ատուր մկրտութեան Տեառն մերոյ, մեծարեաց թագաւորն զտէր Պետրոս և զվարդապետսն Հայոց, և ի վեր ետ կացուցանել քան զառաջնորդսն Յունաց, և յառաջ տէր Պետրոսի հրամայեաց օրհնել զջուրն. զոր իբրեւ արկանել զմիտոն սուրբ ձիթոյն ի ջուրն, և հարկանել սուրբ Նշանան զջուրն, հուր սաստկապէս ցոլացեալ երեւել ի վերայ ջրոյն, և կապեցաւ գետն առ վայր մի և ոչ շարժել: Եւ տեսալ թագաւորին և զօրացն զարհուրեցան: Եւ խոնարհեալ թագաւորն՝ արկանել զօրհնեալ ջուրն ի վերայ գլխոյն, աջովն Պետրոսի: Եւ դարձաւ տէր Պետրոս մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց: Իսկ Վասիլին յետ ժամանակաց զայ յԱնտիոք ի ծածուկ Գ արամբ հաւատարմօք զայ ի Սեաւ լեառնն ի տեղին որ կոչի Պաղակնիակ, և ի հօր տեղոյն առնու զԲրիստոսական կնիքն: Եւ յայնմհետէ եղև որպէս հայր աշխարհիս Հայոց<sup>5</sup>»:

*Նշենք, որ երկերի մանրամասն համադրուածը վեր է հանում նման բազմաթիւ այլ բառացի համընկնումներ<sup>6</sup>, որոնք խօսում են «Տարեգրքի» եւ «Ժամանակագրութեան» բնագրերի ուղղակի կապի մասին:*

*«Տարեգրքի» անմիջական առնչութիւնը «Ժամանակագրութեան» հետ չի արտայայտուում միայն առանձին դրուագների բառացի քաղուածներով: Բնագրագիտական քննութիւնը ցոյց է տալիս, որ Սմբատ Սպարապետը պահպանում է նաեւ իր սկզբնաղբիւրի վկայութիւնների հերթականութիւնը՝ ժամանակագրական եւ թեմատիկ առումներով: Անշուշտ, Հեղինակը, ելնելով զաղափարական եւ ոճական ո-*

5 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 24-26:  
6 Մատթէոս Ուոհայեցի, էջ 42, 48-49, 49-50, 50-52, 87, 91-92, 93-96, 103, 105-106, 109-112, 120-121, 150, 180, 189, 192, 198, 220 եւ այլն, Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 20, 23-24, 24-26, 26-27, 37, 39, 40-41, 45, 46, 48-49, 51-52, 60, 65-66, 69, 70-71, 74-75, 87-88 եւ այլն:

4 Մատթէոս Ուոհայեցի, էջ 49-50:

րոշակի սկզբունքներից, վերամշակման է ենթարկում իր սկզբնաղբիւրի հաղորդումները՝ յաւելելով կամ յապակելով առանձին հատուածներ, սակայն դրանից ընդհանուր պատկերը չի փոխուում: Նկատենք նաեւ, որ «Ժամանակագրութիւնից» է քաղագրուած մօտ երկուհարիւրամեայ ժամանակաշրջան, եւ Սմբատ Սպարապետը առանձին ղէպքերում է միայն դիմում այլ հեղինակների երկերին, ինչը կարող է վկայել Մատթէոս Ուռհայեցու՝ Սմբատ Սպարապետի համար անառարկելի հեղինակութիւն լինելու մասին: Այս հանգամանքով էլ պայմանաւորուած պէտք է համարել նրա հակուածութիւնը՝ սկզբնաղբիւրը բառացի ընդօրինակելու սկզբունքին:

Այսպիսով՝ բնագրագիտական քննութիւնը, վեր հանելով առկայ բազմաթիւ քաղումների բառացի եւ հետեւողական բնոյթը, վկայում է, որ Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւնը» «Տարեգրքի» անմիջական եւ հիմնական աղբիւրն է՝ Ժ դարի կէսից մինչեւ ԺԲ դարի առաջին կէսն ընկած ժամանակահատուածի պատմական անցքերը շարադրելիս:

Ինչպէս նշուեց, Սմբատ Սպարապետը միշտ չէ, որ բաւարարուած է իր գլխաւոր սկզբնաղբիւրի հաղորդած տեղեկութիւններով. երկի քաղագրական հատուածի մանրամասն ուսումնասիրումը ի յայտ է բերում տարրեր նաեւ այլ երկասիրութիւններից: Մասնաւորապէս, հաղորդելով Գրիգոր Բ Վկայասէրի կաթողիկոս ընտրուելու մասին, Սմբատ Սպարապետը դիմում է ե՛ւ Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութեանը», ե՛ւ Ներսէս Շնորհալու «Վիպասանութեանը»:

Համադրէք երեք երկերի համապատասխան հատուածները.

**Մատթէոս Ուռհայեցի**

«...և գտին մանուկ մի յազգէ Պահլաունեաց Վահրամ անուն, գորդի Գրիգորին Մա-

գիստրոսի մեծի իշխանին Հայոց. սա լցեալ ամենայն առաքինութեամբ, որ և ըստ օրինի աշխարհիս կին արարեալ էր և սրբութեամբ և անարատութեամբ պահեալ էր զինքն և յայսմ ժամանակիս հրաժարեալ էր ի կնոջէն իւրմէ և մտեալ ի կարգ կրօնաւորութեան, ուսման և աստուածային շնորհացն պարապեալ և հասեալ եղև ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ յօժարամիտ և մեծաւ փափագանօք»<sup>7</sup>:

**Ներսէս Շնորհալի**

- «Զգիրս բազումս թարգմանեալ,
- Առ ի Յունացն և Ասորաց
- ճառս սրբոց վերաբերեալ:
- Տօն յիշատակ նոցին կարգեալ,
- Ընթերցուածովն զարդարեալ,
- Ձորս ոչ միայն լոկ վերծանեալ,
- Այլ և վարուցն նախանձեալ,
- Ստորում անուն իսկ ընկալեալ, Վկայասէր վերածայնեալ:
- Ժառանգութիւն ոչ ստացեալ,
- Ոչ ի միում վայրի բնակեալ,
- Պանդխտաբար յերկրի շրջեալ, Զփաղցեալ հոգիսն կերակրեալ»<sup>8</sup>:

**Սմբատ սպարապետ**

«...և գտին յազգէն Պահլաունեաց գՎահրամ, որդի Գրիգորի Մագիստրոսի, որդոյ Վասակայ Պահլաունոյ սպարապետի Հայոց, որ յետ ամուսնանալոյ ըստ աշխարհի՝ ստացեալ էր զվարս միանձնատրութեան, և հմուտ էր գիտութեան հին և նոր Կտակարանաց, և վարժեալ ի մանկութենէ յուսումն աստուածային գրոց: Զսա առեալ առ հասարակ ամենայն ժողովն, և կամօք ամենեցուն եղին կաթողիկոս Հայոց, և կոչեցին զնա ըստ նախնոյն իւրոյ սրբոյն Գրիգորի, Գրիգորիս: Սա պայծառացոյց զեկեղեցիս Հա-

7 Մատթէոս Ուռհայեցի, էջ 154-155:  
 8 Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, քննական բնագիրը պատրաստեց, ծանօթագրեց և առաջաբանը գրեց՝ Մ. Մկրտչեան, Երեւան, 1981, էջ 116-117:

յաստանեայց, և հալածեաց զխաւար նսեմութեան որ մտեալ էր յազգս Հայոց: Թարգմանեաց ի յունաց և յասորաց ճառս բազումս ի հայ լեզուս, զվարս սրբոց և զպատմութիւնս վկայից. և այնպէս սիրէր զսուրբս մինչ զի Վկայասէր կոչեցաւ: Շրջէր հետիոտս, և քարոզէր որպէս առաքեալն Քրիստոսի. և այնպէս եկաց զամենայն ատարս կենաց իւրոց բարի հովուութեամբ»<sup>9</sup>:

Այսպէս, եթէ դրուագի առաջին մասում հեղինակի հաղորդումը հիմնուած է Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» վրայ, ապա վերջին՝ ընդգծուած հատուածը մօտ է Ներսէս Շնորհալու «Վիպասանութեանը»: Մասնաւորապէս, Սմբատ Սպարապետը, ինչպէս եւ Ներսէս Շնորհալին, յտակ նշում է Գրիգոր Վկայասէրի յունարէն եւ ասորերէն լեզուներից վարքեր եւ վկայաբանութիւններ թարգմանելու, Գրիգորի՝ Վկայասէր մականունը ստանալու եւ վարած կենսակերպի մասին, իսկ Մատթէոս Ուռհայեցին բաց է թողնում այս կարեւոր հանգամանքները: Սմբատ Սպարապետը, ըստ երեւոյթին, համադրում է Մատթէոս Ուռհայեցու ու Ներսէս Շնորհալու հաղորդած տեղեկութիւնները եւ ոչ բառացի փոխանցելով քաղագրուող հատուածների հիմնական բովանդակութիւնը՝ լրացնում ու հարստացնում է «Ժամանակագրութիւնում» Գրիգոր Վկայասէրի մասին պատմող դրուագը:

«Վիպասանութեան» ազդեցութիւնը այսքանով չի սահմանափակուում: Մի քանի էջ յետոյ հեղինակը կրկին վերադառնում է այս աշխատութեանը եւ լրացնելով իր գլխաւոր սկզբնաղբիւրի տեղեկութիւնները՝ հաղորդում է Գրիգոր Բ Վկայասէրի եգիպտոս կատարած ուղեւորութեան մասին<sup>10</sup>:

«Տարեգրքի» եւ դրա սկզբնաղբիւրների համադրումը ցոյց է տալիս, որ «Վիպա-

9 Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 61-62:  
 10 Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 82: Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 118:

սանութիւնը» Ներսէս Շնորհալու միակ աշխատութիւնը չէ, որին դիմել է Սմբատ Սպարապետը: Այսպէս, հեղինակի՝ 1144 թ. Հալէպի Զանգի ամիրայի կողմից Եղեսիայի գրաւումը ներկայացնող հաղորդումը պարունակում է մի շարք զուգահեռներ Ներսէս Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոէմի հետ: Ամենայն հաւանականութեամբ, հեղինակը, ով ծանօթ է եղել նշուած ստեղծագործութեանը, Եղեսիայի գրաւման վերաբերեալ տեղեկութիւնները քաղագրել է անմիջապէս նրանից եւ ոչ թէ այդ իրադարձութիւններին անդրադարձած, Մատթէոս Ուռհայեցու՝ «Ժամանակագրութեան» շարունակող Գրիգոր Երէցի, Միքայէլ Ասորու կամ Վիլհելմ Տիւրացու (Գիյոմ Տիւրոսցի) աշխատութիւններից, ինչպէս կարող է թուալ առաջին հայեացքից:

Համադրենք նշուած աշխատութիւնների համապատասխան հատուածները.

**Գրիգոր Երէց**

«Իսկ ի վերանալ թուականութեանս Հայոց ՇՂԳ ի տէրութեանն Անտիոքոս որդոյ Պետելինին, որ ի տիս մանկութեան, հսկայագօր և ուժեղ, այլ ոչ խելացի յիմաստասիրութեանն իշխանութեանն Պաղտոյնին, որ էր տէր Քեսնոյ և Մարաշայ և գաւառաց նոցա՝ ի սինօնէն Մելտենոյ մինչև ի դուռն Անտիոքոս, որ էր տղայ տիօք և ծեր մտօք, աստուածահանոյ յամենայն ի գործս արութեան, ի կոմսութեանն ճօպնին՝ փոքու որդոյ մեծի փաջ զօրականին ճօպնին, ի հայրապետութեանն Տեառն Գրիգորիսի Հայոց վերադիտողի տանն Թորգոմայ՝ յատարս սորա և յառաջասացեալ ի թուաբերութեան, ի տօնի սրբոյ Նախավկային Ստեփաննոսի, անտես եղեալ փաղաֆն Ոսոհա ի փաղցր կամաց Արարչին, որ և առաւ բռնութեամբ յորդոցն Հագարու, որոյ անուն գլխատրին Զանգի յորջոջէր, որ բազում և անխնայ արիւն ետ հեղոյ, ոչ խնայելով ի

պատուական ծեսն և ոչ ողորմելով գառնանման անմեղ տղայոցն ...»<sup>11</sup>:

**Վիլհելմ Տիրացի<sup>12</sup>**

«Այդ նոյն թուականին, Ֆուլկ տիրակալի մահուան եւ Բալդուինի գահ բարձրանալու օրերի արանում շարագործ Սանգուինը (այսինքն՝ Զանգին), թուրքական իշխաններից հզօրագոյնը, հին ժամանակներում Ասորեստան կոչուած երկրի մայրաքաղաք Նինուէի կամ այժմ՝ Մոսուլի տիրակալը, մեծ զօրով պաշարեց մեղիացիների մեծ եւ նշանաւոր քաղաքը՝ Եղեսիան, առաւել յայտնի Ռագէս անունով, որն ընկած է Եփրատի ափին, գետից մէկ օրուայ ճանապարհի վրայ: Ընդ որում, նա յոյսը դրել էր մասամբ իր ժողովրդի մեծամասնակութեան եւ ուժի վրայ, մասամբ՝ Եղեսիայի կոմս Ժոսլինի եւ Անտիոքի Ռայմունդ դիսի միջեւ տեղի ունեցած բախման վրայ: Այս ամբողջն օգտագործեց վերոնշեալ մեծ իշխան Սանգուինը եւ յարձակուեց քաղաքի վրայ ամբողջ Արեւելից հաւաքուած անհամար հեծելազօրով եւ շրջակայ քաղաքներից հաւաքուած հետեակով: Այդ կերպ նա պաշարեց Եղեսիան այնպէս, որ ոչ բնակիչները կարող էին դուրս գալ քաղաքից, ոչ էլ որեւէ մէկը կարող էր ներս մտնել քաղաք: Բացի այդ, քաղաքում արդէն պաշարի եւ անհրաժեշտ այլ ապրանքների պակաս կար: Քաղաքը շրջապատուած էր ամուր պարսպով, իսկ վերին հատումաձը՝ բարձր աշտարակներով, այնպէս որ անգամ քաղաքի գրաման ժամանակ կարելի էր այնտեղ ապաստան գտնել: Բայց թշնամու դէմ լաւագոյն միջոցը քաղաքում եղած մարդիկ են, ովքեր պայքարում են իրենց ազատութեան համար եւ թշնամուն հակահարուած տալու փառքին ունեն: Եթէ պաշարուածներից չկայ մէկը, ով կը ցանկանայ դիմադրել, ապա եւ պարիսպները, եւ աշտարակները անիմաստ են, եթէ քաղաքը պաշտպանողներ չկան: Տեսնելով քաղաքը առանց զօրքի, Սան-

11 Մատթեոս Ռոմայեցի, էջ 371-373:  
12 Բնագիրը տե՛ս՝ Guillaume de Tyr et ses continuateurs, t. II, Paris, 1880, p. 92-95 (թարգմանութիւնը մերն է – Տ. Ա.):

գուինը այն գրաւելու աւելի մեծ յոյս ունեցաւ: Նա իր զօրքը տեղաբաշխեց քաղաքի շուրջ, իրաւանջիւրին հրամանատար նշանակեց եւ սկսեց քաղաքի դարպասներին հարուածել քարանետ մեքենաներով, իսկ բնակիչներին անհանգստացնել՝ վերջիններիս վրայ բազմաթիւ նետեր թողնելով: Այդ ընթացքում Սանգուինը անընդմէջ յարձակուած էր պաշարուածների վրայ եւ ամէն ինչ անում էր նրանց թուլացնելու համար: Այդ կերպ նա հրամայեց պատի տակ անց բացել, որից յետոյ պարսպի մի մասն ընկաւ եւ թշնամին 100 կանգուն բացուած ունեցաւ: Յանկալի արդիւնքին հասնելով թշնամին բոլոր կողմերից մտաւ քաղաք եւ շինարարեց ոչ մէկին՝ անկախ տարիքից, իրավիճակից եւ սեռից...»:

**Միքայէլ Ասորի<sup>13</sup>**

«Եղեսիայի, որը թուրքերը խլեցին ֆրանկներից, առաջին գրաւումը կատարուեց այսպէս: Նրա բնակիչները վաղուց արդէն նեղուրին էին կրում թիւրքերի կողմից եւ քաղաքը ուժազրկուել էր: Այդ պատճառով քաղաքի տէր Ջոսլինը անակնկալ պատերազմ սկսեց Մոսուլի տէր Զանգիի դէմ: Դրա հետ մէկտեղ, երբ Զանգին հետապնդում էր Հեսնայ Զիադի տիրոջը, վերջինս աջակցութիւն գտաւ Ջոսլինի մօտ, ում յանձնեց Բէյք Բուլա ամրոցը, որպէսզի նա օգնի իրեն Զանգիի դէմ, ինչպէս սուլթան Մասուդն էր իրեն օգնում: Ջոսլինը չէր հասկանում, որ իրեն ձեռնառու չէ պայքարել թիւրքերի հետ միասին թիւրքերի դէմ եւ զօրք ուղարկեց Գարա Արալանին օգնութեան: Սա էլ հէնց առիթ հանդիսացաւ: Երբ Ջոսլինը ուղեւորուեց Անտիոք, Խառանի բնակիչները յայտնեցին Զանգիին, որ Եղեսիայում զօրք չկայ: Զանգին մեծաթիւ զօրք հաւաքեց եւ 1144 թ. նոյեմբերի 28-ին երեքշաբթի օրը սկսեց Եղեսիայի շրջափակումը... Դեկտեմբերի 1-ին Զանգին հրամայեց սկսել ընդհանուր գրոհը: Եօթ փարա-

13 Բնագիրը տե՛ս՝ Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche, 1166-1199. Éditée pour la première fois et traduite en français par J. B. Chabot, t. III, Paris, 1905, p. 260-263 (թարգմանութիւնը մերն է – Տ. Ա.):

նետ մեքենաներ փարեք էին նետում, իսկ զինուորները նետերի տարափ էին տեղում: Քաղաքի բնակիչները, ծերերն ու երիտասարդները, տղամարդիկ եւ կանայք, հոգեւորականները քաղաքի պատերի վրայ մարտնչում էին: Երբ Զանգին տեսաւ, որ դժբախտ ժողովուրդը փառաբար դիմադրում է, հրամայեց փորել պարսպի տակ: Նա խոր անցք բացեց եւ հասաւ պարսպին: Իրենց կողմից շրջափակուածները սկսեցին ներսից փորել շրջափակողներին ընդառաջ եւ յարձակուեցին նրանց վրայ: Եւ քանի որ այս խորամանկութիւնը յաջողութիւն չբերեց, որոշեցին փորուած անցքի առաջ նոր պատ կառուցել... Շրջափակողները այրեցին փայտերը եւ առաօտեան կոխը կատաղի դարձաւ: Օղը սեւացաւ ծխից, ծնկներն ու սրտերը ցնցում էին փողերի ձայնից, գրոհի շտապող ամբոխից, մարդկային վայնասունից: Երբ փայտը այրուեց, պատը եւ երկու աշտարակները փլուցցին եւ նկատելի դարձաւ ներսից նոր կանգնեցուած պատը: Թուրքերը շփոթուեցին, սակայն յետոյ նկատեցին հին եւ նոր պատերի միջեւ անցատեղը: Այդ ժամանակ զօրքերը հաւաքուեցին այն ճեղքերու համար: Բնակիչները հաւաքուեցին արեւափսկոպոսի եւ եպիսկոպոսների շուրջը, որ դիմագրաւեն յարձակմանը: Անցատեղը լցուած էր շրջափակողների եւ շրջապատողների բազմաթիւ դիակներով: Երբ ժողովուրդը այստեղ զբաղուած էր պայքարով եւ պարիսպները մնացել էին առանց պաշտպանների, թուրքերը աստիճաններ դրեցին եւ բարձրացան նրանց վրայ: Ոմն փուրը առաջինը բարձրացաւ եւ բղաւելով սկսեց փարեք նետել մարդկանց վրայ: Երբ տեսան նրան, նրանց ձեռքերը թուլացան, վախը համակեց նրանց, նրանք շրջուեցին եւ վազեցին դէպի միջնաբերդ: Ով կարող է առանց սարսուելու եւ ամուր ձեռքով նկարագրել այն աղետը, որը տեղի ունեցաւ 1144 թ. դեկտեմբերի 23-ին շաբաթ օրը: Թուրքերը ներխուժեցին մերկացուած դաշիններով եւ սրերով, նրանք յագեցրին ծարաւը ծերերի եւ երեխաների, տղամարդկանց եւ կանանց, փահանաների եւ սարկաւազների, ճգնաւորների եւ վանականների,

րի, միանձնուհիների, կոյսերի, նորածինների արիւնով...»:

**Ներսէս Ծնորհալի**

- «Յարձակեցաւ յանկարծօրէն և յեղակարծ ժամանակին,
- Յորժամ տեսին և ծանուցին, որ գօրականն իմ աստ չէին ...
- Պատնէշ կանգնեալ մեքենայիմ, ոմբաբարս հոսէին:
- Մեծէին, հարկանէին, անհնարին տագնապէին.
- Բայց այսոքիմ ոչ կարացին յաղթել փառացն, ու յիս կային:
- Մինչ ի յայլ հնար մտեալ այն խորամանկ նենգաւորին.
- Ռոպէս իւրօրն փորէին, ներոյ հիմանն ամրականին,
- Սինս և նեցուկ հաստատէին աշտարակացն և պարսպին,
- Առ ի յայրել պատրաստէին, որպէս օրէն է այս նոցին...
- Յորժամ գհուրն Սողոմին, ներուստ ի վեր բորբոքեցին,
- Ոչ ի վերուստ անձրևածին, այլ ի ստորինս փորուածին,
- Յայնժամ պարիսպ ամրականին վերուստ ի վայր կործանէին
- Եւ ի հիմանց տապալէին, մուտ թշնամեացն գործէին...
- Գագանաբար յարձակէին մերձեալ ի մուտն պարսպին:
- Իսկ գօրականն անյաղթելի, որ անդամօր հասեալ կային,
- Ընդդիմամարտ գոյով նոցին՝ զհակառակն վանէին.
- Եւ որպէս փայտ ինչ անտառի յանօրինաց կոտորէին,
- Մինչ զի գահի հարկանէին և յետս ընդդէմ նահանջէին...
- Քանզի յորժամ ոչ կարացին, յաղթել փառացն, որ անդ կային,

- Յայնժամ վիրագն անդնդային գոչեաց ուս-  
միկ գորականին...
- Եւ գայն լուեայ Արարացին, անթիւ գորաց  
բարբարոսին,
- Իբրեւ զեռանդն պտուտկէին՝ շրջան առեայ  
շուրջ փաղափին...
- Այլ զի նուագ ժողովէին, ոչ բաականս  
պարսպին,
- Եւ այն դատեայ վաստակէին, ի յանդար  
պատերազմին:
- Քանզի տեայ ժովկալեցին, իբր ամսօրեայ  
գոլով մարտին,
- Վասն այնորիկ տեղ ինչ մասին ի պահպա-  
նաց բափուր գոին:
- Յորում ելեայ բարձրանային սակաւ ոմանի  
յաշտարակին,
- Իսկ ժողովուրդ փաղափին գայն ինչ տեսեայ  
գարհուրէին,
- Ձայնս գուծի արկանէին և ի փախուստն  
դառնային»<sup>14</sup>:

**Սմբատ Սպարապետ**

«Ի ժամանակին յայնմիկ գորածողով ա-  
րար տէրն իստոնայ Ջանկի, և գտեայ դիպող ժա-  
մանակ զի ոչ էր ձօսյինն անտ, և եկեայ բանա-  
կեցաւ ի վերայ Ուռհայոյ, կանգնեաց մեքենայս  
եւ նեղէր գփաղափն, եւ արք փաղափին զմիմեանս  
յորդորելով տային պատերազմ ընդ նմա, և ո-  
չինչ կարէին առնել փաղափին: Ապա այլ իմն  
խորհուրդ շար առեայ փորէին զհիմն պարսպին  
խորագոյն, և հանեայ զբարն և սոյն եղեայ ի  
տեղին, և արարին բազում տեղիս յայպէս և լ-  
ցին զփորուածսն փայտիս, և զարկեայ կրակ  
բորբոքեցին զփայտն և այրեայ փլաւ պարսպն,  
և առ հասարակ դիմեցին ի փաղափն, և փաղափ-  
ցիմն անդ ժողովեայ յետս պահէին զնոսա. և նո-  
ցա զնացեայ գաղտ ի միս այլ կողմ էլին ընդ

14 Ներսէս Շնորհալի, *Ողբ Եղեսիոյ*, քննական  
բնագիրը, բանասիրական դիտողութիւնները,  
Ծանօթագրութիւնները՝ Մ. Մկրտչեան, Երևան,  
1973, էջ 55-71:

պարսպն և մտին ի փաղափն, և սուր ի վերայ ե-  
ղեայ կոտորէին...»<sup>15</sup>:

Այսպիսով, Սմբատ Սպարապետը, ի  
տարբերութիւն Գրիգոր Երէցի, Վիլհելմ  
Տիւրացու եւ Միքայէլ Ասորու, այս իրա-  
դարձութիւնները ներկայացնում է միան-  
գամայն այլ ընդգրկմամբ եւ շեշտադրում-  
ներով: Հեղինակը նշում է, որ Ջանգին  
յարձակուել է քաղաքի վրայ՝ օգտուելով  
կոմս Ջոսլինի բացակայութիւնից: Գրեթէ  
նոյնն է հաղորդում նաեւ Ներսէս Շնորհա-  
լին՝ պատմելով, որ թշնամին յարձակուում  
է յանկարծակի, երբ իմանում է, որ քաղա-  
քում զօրք չկայ: Այս մասին է վկայում  
նաեւ Միքայէլ Ասորին իր աշխատութեան  
ասորերէն բնագրում, սակայն՝ ընդարձակ  
նախաբանով, որի մասին «Տարեգրքը»  
լռում է: Իսկ ինչ վերաբերում է Միքայէլ  
Ասորու «Ժամանակագրութեան» հայերէն  
թարգմանութեան խմբագրութիւններին,  
ապա նրանցում այս իրադարձութիւններն  
արձանագրուած են միայն հպանցիկ եւ  
մանրամասնութիւններ չեն պարունա-  
կում<sup>16</sup>: Սմբատ Սպարապետը, ներկայաց-  
նելով բազմաթիւ մանրամասներ, էպպէս  
ընդլայնում է նաեւ քաղաքի գրաման  
նկարագրութիւնը: Նա նշում է, որ թշնա-  
մին փորում է քաղաքի պարսպը եւ, ա-  
ռաջացած փոսերը լցնելով փայտով, այ-  
րում: Ըստ հեղինակի՝ բնակիչները փոր-  
ձում են դիմադրել քաղաք ներխուժած  
թշնամուն, սակայն վերջինս գաղտնի կեր-  
պով քաղաք է մտնում պարսպի մէկ այլ  
կողմից: Նման տեղեկութիւններ Գրիգոր  
Երէցի երկի շարունակութիւնը առհասա-  
րակ չի պարունակում, իսկ ինչ վերաբե-  
րում է Վիլհելմ Տիւրացուն, ապա նա ներ-  
կայացնում է Սմբատ Սպարապետի հաղոր-

15 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 163-164:  
16 Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորոց ժա-  
մանակագրութիւն, Յերուսաղէմ, 1870, էջ 424.  
Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասոր-  
ոց պատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 418:

դածի միայն մի մասը: Այստեղ Սմբատ  
Սպարապետի հաղորդածը մօտ է Ներսէս  
Շնորհալու տեքստին: Վերջինս պատմում  
է քաղաք ներխուժած թշնամուն ցոյց  
տրուած դիմադրութեան մասին միեւնոյն  
ընդգրկմամբ: Նշենք, որ Գրիգոր Երէցը,  
Միքայէլ Ասորին եւ Վիլհելմ Տիւրացին  
թշնամու քաղաք ներխուժելուց յետոյ ծա-  
լալուած իրադարձութիւնների մասին հա-  
ղորդում են որոշ մանրամասներ, որոնք  
չենք գտնում «Տարեգրքում»: Օրինակ,  
համաձայն Գրիգոր Երէցի եւ Վիլհելմ Տիւ-  
րացու, Ուռհայի դարպասի կործանումից  
յետոյ դէպի միջնաբերդ դիմած բնակիչնե-  
րից շուրջ երկու հազար հոգի շնչահեղձ  
են լինում, այդ թւում նաեւ՝ Փրանկ արքե-  
պիսկոպոսը<sup>17</sup>, իսկ ըստ Միքայէլ Ասորու  
նա սպանւում է մի թիւրքի կողմից<sup>18</sup>:  
Սմբատ Սպարապետը եւ Ներսէս Շնորհա-  
լին այդ մասին ոչինչ չեն հաղորդում:  
Այսպիսով, նշուած հատուածների համա-  
դրումը ցոյց է տալիս, որ Սմբատ Սպարա-  
պետի քաղաքումը տարբերում է ե՛ւ Մի-  
քայէլ Ասորու ու Վիլհելմ Տիւրացու ըն-  
դարձակ, ե՛ւ Գրիգոր Երէցի համեմատա-  
բար հակիրճ տարբերակներից: Այն մօտ է  
թւում Ներսէս Շնորհալու հաղորդածին:  
Նշենք, որ շարահիւսական եւ բառային  
համընկնումներ այդ երկու դրուագներում  
գրեթէ՝ չկան, բայց բովանդակութիւնը  
խիստ նման է: Հեղինակն այստեղ նոյնպէս  
հրաժարում է իր սկզբնաղբերից բառացի  
մէջբերում կատարելու սկզբունքից:  
Սմբատ Սպարապետը, ընդհանրացնելով  
փոխանցուող հատուածի բովանդակութիւ-  
նը, պատմական դրուագը ներկայացնում է  
ինքնատիպ շարադրանքով: Այն, որ Ներ-  
սէս Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոէմը  
սկզբնաղբեր է հանդիսացել «Տարեգրքի»  
նշուած հատուածի շարադրման համար, ո-

րոշակիորէն յուշում է նաեւ հեղինակի՝  
«...սուրբ հայրապետն Ներսէս ողբս ողոր-  
մագինս գրեաց վասն դառնութեանն զոր  
կրեաց Ուռհա...»<sup>19</sup> հաղորդումը:

«Տարեգրքի» միւս սկզբնաղբերը, ո-  
րը հիմք է հանդիսացել 1136-1163 թթ. ի-  
րադարձութիւնների շարադրման համար,  
Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրու-  
թեան» շարունակութիւնն է՝ Գրիգոր Երէ-  
ցի հեղինակութեամբ: Այս երկերի համա-  
դրումն ի յայտ է բերում մեծ թուով համ-  
ընկնումներ եւ զուգահեռներ (ինչը վկա-  
յում է, որ Սմբատ Սպարապետը յաճախ է  
դիմել իր սկզբնաղբերին), սակայն վեր է  
հանում նաեւ այդ քաղումների ակնյայտ  
ընտրողական բնոյթը:

Այսպէս, Գրիգոր Երէցի երկի շարու-  
նակութիւնը «Տարեգրքի» համար դառ-  
նում է հիմնական սկզբնաղբեր, երբ հե-  
ղինակը պատմում է Հարեւան մահմեդա-  
կան պետութիւնների եւ նրանց՝ Ռուբի-  
նեանների իշխանութեան հետ յարաբերու-  
թիւնների, մասնաւորապէս՝ Իկոնիայի  
սուլթան Ռուքն ադ Դին Մասուդ Ա-ի  
(1116-1156) կողմից Մարաշ, Քեսուն, Ռա-  
պան, Պեհսնի քաղաքների գրաման<sup>20</sup>,  
վերջինիս՝ Թորոս իշխանից վրէժ լուծելու  
համար Մանուէլ Ա Կոմնենոս (1142-1180)  
կայսեր կողմից երկու անգամ հրահրուելու  
եւ Կիլիկիա ներխուժելու<sup>21</sup>, իրիճ Ասլանի՝  
եղբայրների ու Եակուբ Արսլանի (Աղուպ-  
Ասլան) հետ բախումների<sup>22</sup>, Թորոս Բ իշ-  
խանի հետ ունեցած յարաբերութիւնների<sup>23</sup>  
եւ այլնի մասին:

19 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 164:  
20 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 166-168.  
Մատթէոս Ուռհայեցի, էջ 395-398:  
21 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 171-173,  
Մատթէոս Ուռհայեցի, էջ 402-404:  
22 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 173-174,  
Մատթէոս Ուռհայեցի, էջ 407-409:  
23 Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, էջ 175,  
Մատթէոս Ուռհայեցի, էջ 410:

17 Մատթէոս Ուռհայեցի, էջ 373. *Guillaume de Tyr  
et ses continuateurs*, p. 95.  
18 *Chronique de Michel le Syrien*, p. 262.

Հեղինակը, սակայն, չի դրսևորում նոյն հետեւողականութիւնը, երբ խօսքը վերաբերում է խաչակրաց իշխանութիւնների, Բիւզանդական կայսրութեան եւ Կիլիկիայի հայկական իշխանութեան փոխյարաբերութիւնները պատմութեանը, ուր «Տարեգրքի» հաղորդումներն անհամեմատ աւելի մանրամասն են: Օրինակ, ներկայացնելով Հալէպի ամիրայ Նուր ադ Դինի (1118-1174) դէմ Մանուէլ Ա Կոմնենոսի, Երուսաղէմի թագաւորի եւ Թորոս Բ իշխանի համատեղ ելոյթի պատմութիւնը՝ հեղինակը չի բաւարարում Գրիգոր Երէցի հաղորդած տեղեկութիւններով եւ յաւելում է մանրամասներ այլ աղբիւրներից, ինչպիսիք են դէպի Անտիոք նրանց փառահեռ մուտքի նկարագրութիւնը<sup>24</sup>, Նուր ադ Դինի դէմ պատերազմին նախապատրաստուելը<sup>25</sup> եւ այլն: Քաղաքներով Գրիգոր Երէցի հաղորդածը՝ Սմբատ Սպարապետը փոխում է սկզբնաղբիւրի մի շատ կարեւոր վկայութիւնը: Ըստ Գրիգոր Երէցի՝ սարսափած Նուր ադ Դինը դեսպաններ է ուղարկում կայսեր մօտ եւ, խոստանալով ազատ արձակել տասը հազար քրիստոնեայ գերիների, առաջարկում է ընդունել իր տիրապետութիւնը<sup>26</sup>: Սմբատ Սպարապետը, ընդհակառակը, փոխելով իրադարձութիւնների ընթացքը, նշում է, որ կայսրն ինքն է դեսպաններ ուղարկում Հալէպի ամիրայի մօտ՝ խնդրելով վերադարձնել գրաւած տարածքներն ու երեւելի քրիստոնեայ գերիներին, սակայն մերժում է ստանում<sup>27</sup>: Սմբատ Սպարապետի հաղորդման համաձայն՝ Նուր ադ Դինը, ում նա համարում է «այր խորագէտ եւ իմաստուն», տեսնելով դեսպաններին, հասկանում է կայսեր զօրութեան չափը եւ հրաժարում է կատարել նրա ցանկութիւնը՝

24 Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 180-181:  
 25 Նոյն տեղում, էջ 181:  
 26 Մատթէոս Ուոհայեցի, էջ 420:  
 27 Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 181:

«եթէ կարող ես, ուժով արասցէ դայն»<sup>28</sup>: Հեղինակը, համարձակ բառեր վերագրելով նաեւ ոմն իշխան Ֆիլիպի, գրում է. «Մեք վասն գանձի եւ հանդերձի ոչ եկաք առ քեզ, այլ վասն փրկութեան քրիստոնէից. եթէ դայդ խորհիս եւ առնես, գանձինս մերովք տամք ի ծառայութիւն քեզ, ... եւ տացես զոսկիդ քո կարօտելոց քոց. ապա թէ դայս ոչ առնես զոր խնդրեմք եւ դու խոստացար առնել, փրկութիւն քրիստոնէից, նա ոսկիդ քո անպիտան է մեզ»<sup>29</sup>: Սմբատ Սպարապետը, այսպիսով, փոխում է իր սկզբնաղբիւրի շեշտադրումը եւ դժուար չէ կռահել, թէ ում է նա կշտամբում: Յաւելելով նոր վկայութիւններ՝ Սմբատ Սպարապետը, ըստ էութեան, ուշադրութեան կենտրոնը տեղափոխում է այդ իրադարձութիւններում կայսրի ունեցած բացասական դերի վրայ:

Ահա թէ ինչպէս են ներկայացնում Մանուէլ Ա Կոմնենոսի՝ համատեղ արշաւանքից հրաժարուելու եւ ետ վերադառնալու դրուագը Գրիգոր Երէցը եւ Սմբատ Սպարապետը: Գրիգոր Երէցը գրում է, որ թագաւորը ետ վերադարձաւ, որովհետեւ թագաւորական քաղաքից լուր էր ստացել գահակալական կռիւների մասին (նշուած անցուղարձերի ստուգութիւնը ժամանակակիցը պարզել չի կարողացել)<sup>30</sup>: Սմբատ Սպարապետը առանց դոյզն-ինչ կասկածելու, համոզուած պնդում է, որ կայսրը կեղծում էր իր վերադարձի պատճառը՝ «ստայօդ բանիւք» յօրինելով<sup>31</sup>: Աւելին, Սմբատ Սպարապետը, անդրադառնալով Մանուէլ Ա-ի Անտիոք գալու «իրական» նպատակին, գրում է, որ «...նա յանձն առնոյր եւ խոստանայր նոցա, այլ ոչ ճշմարտութեամբ եւ ի սրտէ, քանզի ունէր խորհուրդ մտանել յԱնտիոք ոչ վասն պիտանի ինչ

28 Նոյն տեղում:  
 29 Նոյն տեղում, էջ 179-180:  
 30 Մատթէոս Ուոհայեցի, էջ 421:  
 31 Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 182:

գործոյ, այլ զեղիս եւ մոլեկան ցանկութեան կանանց, եւ զի խորհեալ էր առնուլ իւր կին ի դստերաց Պեմնդին, տեսանն Անտիոքայ, եւ գնայր տեսանել դայն՝ թէ ինիցի ըստ կամացն, ոչ յայտնելով ումեք զխորհուրդն»<sup>32</sup>: Այս դրուագը բացակայում է Գրիգոր Երէցի երկում, սակայն այն անհրաժեշտ է Սմբատ Սպարապետին՝ կայսեր բացասական կերպարը ամբողջացնելու համար:

Նշենք, որ Գրիգոր Երէցը նոյնպէս իր վրդովմունքն է յայտնում կայսեր եւ առհասարակ Բիւզանդիայի՝ Հայերի նկատմամբ վարած քաղաքականութեան կապակցութեամբ: Սակայն այն մօտեցումը, որ ցուցաբերում է Սմբատ Սպարապետը Մանուէլ Ա Կոմնենոսին ներկայացնելիս, բնութագրական չէ «Տարեգրքի»՝ Մատթէոս Ուոհայեցուց քաղաքուած հատուածի համար: Այստեղ Սմբատ Սպարապետը, շրջանցելով Մատթոս Ուոհայեցու սուր գնահատականները, դրսևորում է զսպուածութիւն կերպարների բնութագրման հարցում: Ուրեմն, ինչո՞վ է պայմանաւորուած հեղինակի մօտեցման նման կտրուկ փոփոխութիւնը: Հնարաւոր պատճառները, թերեւս, պէտք է փնտրել ինչպէս Սմբատ Սպարապետի սկզբնաղբիւրների բնոյթի, այնպէս էլ նրա դիրքորոշման մէջ:

Այսպէս, «Տարեգրքի» եւ Գրիգոր Երէցի շարայարութեան մանրամասն համադրումը ցոյց է տալիս, որ հեղինակը Մանուէլ Ա Կոմնենոսի բացասական կերպարը հակադրում է Թորոս Բ Ռուբինեանի զրական բնութագրին: Ե՛ւ մէկի, ե՛ւ միւսի դէպքում հեղինակի դիրքորոշումը առաւել քան յստակ է. Թորոս իշխանին նա համարում է «այր իմաստուն եւ կիրթ եւ վարժ եւ կորովի ի պատերազմունս, եւ քաջասիրտ եւ մեծախորհուրդ, եւ առ ամենայն կարիս քրիստոնէից յոյժ պիտանի, եւ

32 Սմբատայ Սպարապետի Տարեգրք, էջ 179:

առատաձեռն, եւ ամենայն բարի տեսակօք լի»<sup>33</sup>, իսկ կայսրին նա արհամարհանքով անուանում է «բարի թագաւոր»<sup>34</sup>, որը եկաւ «իբրեւ զարծիւ զօրեղ, դարձաւ որպէս զաղուէս տկար», «որպէս փախստական»<sup>35</sup>: Այն, որ հեղինակը մեծ համակրանք ունի Ռուբինեան այս իշխանի նկատմամբ, նկատելի է «Տարեգրքում» նրա անուան հէնց առաջին իշխատակման մէջ: Թորոս իշխանը ներկայացւում է որպէս «այր զգաստ եւ հմուտ աստուածային դպրութեանց, եւ ի պատերազմունս յաջողակս, տեսլեամբ թխամորթ, երկայն ունչ, դիմօք գեղեցիկ եւ ահւրկու, գանգրահեր եւ լի շնորհիւ»<sup>36</sup>: Սակայն միայն նրա արտաքինը չէ, որ առաջ է բերել հեղինակի համակրանքը: Թորոս իշխանի նկատմամբ հեղինակի յատուկ վերաբերմունքը նկատելի է նաեւ նրա քաղաքական ձեռնարկումները գնահատելիս: Մասնաւորապէս, ներկայացնելով Թորոս իշխանի եւ Անտիոքի դուքս Ռէյնալդ (Ռեյնոյ) զը Շատիլեօնի կողմից Կիպրոսի վրայ կատարած յարձակումը՝ Սմբատ Սպարապետը, ի տարբերութիւն իր սկզբնաղբիւրի, այն համարում է «գործ արութեան»<sup>37</sup>: Աւելին, լրացնելով Գրիգոր Երէցի հաղորդած տեղեկութիւնները, յաւելում է նաեւ հետեւեալը. «եւ զայս առնէր Թորոս վասն հօրն իւրոյ զոր անմեղ կապեալ տարան ի Կոստանդինուպօլիս, եւ զինքն զԹորոս եւ զեղբայրն Ստեֆանէ, եւ զմայրն իւր եւ զքորսն, որ եւ հայրն իւր անտ ի բանտի վախճանեցաւ...: Յիշէր եւ զառաջին իշխանսն Հայոց որ խաբամբ տարան ի Կոստանդինուպօլիս եւ կենդանոյն յերկաթի կախաղանս կախեցին, եւ զըրունսն կալան. յիշէր եւ զԳագկայ կախումն ի Մանտալէի որդւոցն, եւ զայլս

33 Նոյն տեղում, էջ 178:  
 34 Նոյն տեղում, էջ 182:  
 35 Նոյն տեղում, էջ 182:  
 36 Նոյն տեղում, էջ 164:  
 37 Նոյն տեղում, էջ 176:

բազում»<sup>38</sup>: Հեղինակը այստեղ արդարացնում է Թորոս իշխանին՝ ոչ պատահականորեն յիշեցնելով Բիզանդիայի՝ նրան եւ հայ իշխաններին պատճառած չարիքների մասին, այն կայսրութեան, որը ի դէմս Մանուէլ Ա Կոմնենոսի, քայլեր էր ձեռնարկում Թորոս իշխանի դէմ՝ Կիլիկիայի հայկական իշխանութիւնը վերացնելու նպատակով: Նշուածից արդէն իսկ կարելի է կռահել հեղինակի մտեցման փոփոխման պատճառը: Սմբատ Սպարապետը, ով ձգտում է ըստ արժանւոյն ներկայացնել իր հերոսին, օգտուելով յարմար առիթից, միջնադարեան ընթացողին է ներկայացնում «բարի» կայսրի իրական կերպարը, իսկ միւս կողմից՝ արդարացնում եւ գովասանքի է արժանացնում Կիլիկիայում հայկական իշխանութիւնը վերականգնած Թորոս Բ իշխանին:

Այսպիսով, Սմբատ Սպարապետը որոշ դրուագներում չի հակասում Գրիգոր Երէցին, սակայն դիմելով այլ սկզբնաղբիւրների, լրացնում է նրա վկայութիւնները՝ քաղաքը տեղի տալով այն ընդգրկումն ու շեշտադրումը, որն իրեն անհրաժեշտ է:

Այն, որ Սմբատ Սպարապետը այս շրջանի պատմութիւնը շարադրելիս Գրիգոր Երէցից զատ ունեցել է մէկ այլ՝ մեզ անյայտ սկզբնաղբիւր, վկայում է նաեւ «Տարեգրքում» Կիլիկիայի հայկական իշխանութեան ներքին պատմութեանը վերաբերող մի շարք ամբողջական դրուագների յաւելումը, ինչպիսիք են, օրինակ, կաթողիկոսական աթոռի Ծովք տեղափոխուելը<sup>39</sup>, Հռոմկլայի ձեռք բերման պարագաները, կաթողիկոսական աթոռի այնտեղ հաստատուելը<sup>40</sup>, Լամբրոնի տէր Օշին իշխանի գերութիւնից ազատուելու հանգա-

38 Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 176:  
 39 Նոյն տեղում, էջ 161:  
 40 Նոյն տեղում, էջ 168-169:

մանքները<sup>41</sup>, վերջինիս որդու եւ Թորոս իշխանի դստեր ամուսնութիւնը<sup>42</sup> եւ այլն:

Նշենք, որ «Տարեգրքի» ենթադրեալ սկզբնաղբիւրների շարքում յիշատակուում է Սամուէլ Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» աշխատութիւնը<sup>43</sup>: Սակայն այս պնդումը անհիմն է, քանզի երկու երկերի ուսումնասիրումը ի յայտ է բերում միանգամայն այլ իրողութիւն: Մասնաւորապէս, «Տարեգրքի» եւ «Հաւաքմունք ի գրոց պատմագրացի» հնագոյն ձեռագրերի համադրումը ցոյց է տալիս, որ այս երկու աշխատութիւնների միջեւ չկայ որեւէ նմանութիւն. աւելին, Սամուէլ Անեցին առհասարակ չի էլ անդրադարձել Կիլիկիայի պատմութեանը: Սակայն, միւս կողմից՝ ձեռագրերի համեմատութիւնը ի յայտ է բերում մի շարք զուգահեռներ «Տարեգրքի» ձեռագրերի եւ Սամուէլ Անեցու աշխատութեան 1676-1677 թթ. ընդօրինակուած թիւ 1899 գրչագրի<sup>44</sup> միջեւ<sup>45</sup>: Այդ համընկնումները, որոնք «Տարեգրքում» շատ աւելի մանրամասն են, գտնում ենք ոչ միայն թիւ 1899 ձեռագրին համաժամանակեայ «Տարեգրքի» ընդօրինակութիւններում, այլ նաեւ վերջինիս ամենահին՝ Վենետիկի թիւ 1308 ձեռագիր օրինակում: Այսպիսով, ձեռագրական փաստերը թոյլ են տալիս եզրակացնել, որ Հէնց «Տարեգրքն» է աղբիւր հանդիսացել Սամուէլ Անեցու աշխատութեան թիւ 1899 ձեռագրում տեղ գտած լրացումների համար եւ ոչ հակառակը: Աւելին, եթէ նկատի ունե-

41 Նոյն տեղում, էջ 171:  
 42 Նոյն տեղում:  
 43 Смѳат Спарает, стр. XXXVII.  
 44 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. 2, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012, էջ 453-458. Կ. Մաթեոսեան, Սամուէլ Անեցու ժամանակագրութեան ձեռագրերը եւ նորայայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 191:  
 45 ՄՄ, ձեռագիր թիւ 1899, թ. 57ա, 60բ, 62ա, 62բ, ձեռագիր թիւ 4854, թ. 368բ, 369ա, 370բ, ՄՄ, միկրոժապատէն թիւ 360, էջ 41բ, 64ա-64բ, 68բ:

նանք նաեւ այն հանգամանքը, որ որոշ յաւելումների զուգահեռները գտնում ենք միայն «Տարեգրքի» ձեռագրերի Բ խմբում, ապա կարող ենք վստահօրէն ենթադրել, որ թիւ 1899 ձեռագրի ընդօրինակողի ձեռքի տակ եղած պէտք է լինի Հէնց Բ խմբի ընդօրինակութիւններից մէկը:

Ընդհանրացնելով՝ վերստին արձանագրենք, որ Մաթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւնը» հիմնական աղբիւրն է Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» շուրջ երկդարեայ ժամանակաշրջանի պատմութեան աւանդման համար: Երբեմն այդ դերը ստանձնել է նաեւ «Ժամանակագրութեան»՝ Գրիգոր Երէցի հեղինակած շարու-

նակութիւնը, որը «Տարեգրքի» որոշ հատուածներում նաեւ որպէս լրացնող սկզբնաղբիւր է ներկայանում: Որոշակի հիմքեր գոյութիւն ունեն եւս մէկ սկզբնաղբիւրի մասին ենթադրութիւն կատարելու համար: «Տարեգրքի»՝ Եղեւսիայի գրաւման եւ Գրիգոր Բ Վկայասէրի վերաբերող վկայութիւնների համար սկզբնաղբիւր են դարձել Ներսէս Ծնորհալու «Ողբ Եղեւսիոյ» եւ «Վիպասանութիւն» երկերը: Նշենք նաեւ, որ «Տարեգրքի» սկզբնաղբիւրների ցանկից պէտք է բացառել Սամուէլ Անեցու «Ժամանակագրութիւնը», որը, հաւանաբար, անյայտ է մնացել Սմբատ Սպարապետին: